




ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑԱԴՈՒՄՆԵՐ





ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Լինելով նյութական արտադրության հնագույն ու հիմնարար ճյուղ՝ այն բնակչությանն ապահովում է սննդամթերքով, արդյունաբերության շատ ճյուղերին՝ հումքով: Գյուղատնտեսությունը (ֆերմերություն կամ հողագործություն) զբաղվում է գյուղատնտեսական բույսերի մշակությամբ և կենդանիների բուծմամբ, այլ կերպ ասած՝ այն կենդանիների, բույսերի և սննդի համար օգտագործվող այլ կենսաբանական արտադրանքների բազմացումն ու բուծումն է:

Ընդգրկում է տարբեր ճյուղեր, մթերքների նախնական վերամշակման տարբեր տեսակներ՝ ագրոնոմիա, անասնապահություն, հողաբարելավում, բուսաբուծություն, անտառամշակում և այլն:

Գյուղատնտեսության շատ պրոցեսներ, ինչպիսիք են ոռոգումը, մշակաբույսերի ոռոտացիան (ցանքաժամանակամիջոց), պարարտանյութերի և թունաքիմիկատների կիրառումը, անասունների ընտելացումը, գյուղատնտեսական հասարակության մեջ աշխատանքի բաժանումը, ընդհանուր մասնագիտացումը սոցիալ-տնտեսական համակարգում մեծ առաջընթաց են ապրել, որն էլ խթան է հանդիսացել ավելի բարդ հասարակության՝ քաղաքակրթության ձևավորմանը:



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Այն գյուղատնտեսական արտադրության բարելավմանն ուղղված համակարգ է՝ որակյալ, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրություն ստանալու համար: Այստեղ չեն կիրառվում տոքսիկ նյութեր, կայուն պեստիցիդներ (թունաքիմիկատներ), քիմիական պարարտանյութեր, դրա փոխարեն օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում՝ գոմաղբ) և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարն իրականացվում է միայն բուսական պատրաստուկներով, իսկ օրգանական սննդամթերքի արտադրության մեջ չեն կիրառվում արհեստական նյութեր և ճառագայթում (այն անվտանգ է առողջության համար, ավելի շատ վիտամիններ, հանքային աղեր և այլ սննդարար տարրեր է պարունակում, գերծ է վնասակար քիմիկատներից, որոնք վերամշակված սննդամթերքում օգտագործվում են որպես սննդային, համային հավելումներ և կոնսերվանտներ):



Օրգանական սննդամթերքում սննդարար նյութերի քանակը մինչև 3 անգամ ավելի շատ է, քան ավանդական գյուղատնտեսության՝ թունանյութերի և հանքային պարարտանյութերի կիրառմամբ աճեցված բերքի մեջ:

Օրգանական գյուղատնտեսությունը լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհում, որի զարգացման միջազգային դաշնությունը (IFOAM), գործելով աշխարհի ավելի քան 100 երկրներում, նպաստում և աջակցում է օրգանական գյուղատնտեսության զարգացմանն աշխարհում:

ՀՀ-ում ներուժային մեծ հնարավորություն կա օրգանական գյուղատնտեսության զարգացման համար, այն է՝ ստանալ էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրություն, որի հետ կապված մեծ աշխատանքներ են տարվում տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից:

Գյուղատնտեսության ճյուղերը

Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը բացառապես կախված է տեղի բնական պայմաններից, ռեսուրսներից և հողի օգտագործման տեսակից: Հայաստանը հացաբույսերի, խաղողի վազի, որոշ պտղատու ծառերի մշակության, կենդանիների ընտելացման, գյուղատնտեսության որոշ ճյուղերի ձևավորման նախասկզբնական կենտրոններից է:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ



Երկրագործությունն ընդգրկում է պարենային, տեխնիկական, կերային և գյուղատնտեսական այլ բույսերի մշակությունը: Երկրագործության կարևորագույն խնդիրը հողի բնական բերրիության բարձրացումն է՝ ագրոտեխնիկական և հողբարելավման միջոցառումներով: Տարբերում են երկրագործության էքստենսիվ ու ինտենսիվ, կայուն, անջրդի, ոռոգելի, բնեռային, լեռնային և այլ ձևեր:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնաբուծությունը հանդիսանում է ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկը: Անասնապահությունն ընդգրկում է գյուղատնտեսական կենդանիների և թռչունների բուծումը՝ անասնապահական մթերքներ արտադրելու նպատակով: Անասնապահությունը բնակչությանը մատակարարում է սննդամթերք (կաթ, միս, ձու, ճարպ և այլն), սննդի և թեթև արդյունաբերությանը՝ հումք (կաթ, միս, բուրդ, կաշի, մորթի), գյուղատնտեսությանը՝ բանող ուժ (ձի, եգ, ջորի, ուղտ, եղջերու), օրգանական պարարտանյութ (գոմաղբ և թռչնաղբ): Անասնապահության առանձին ճյուղերից ստացվում են հորմոնային պատրաստուկներ, տարբեր նյութեր դեղագործության համար (օրինակ՝ թռչնաղբից), իսկ անասնապահական մթերքների վերամշակումից առաջացած մնացուկներից՝ արժեքավոր կերեր (մսալյուր, ոսկրալյուր, գտած կաթ և այլն):



Հայաստանի լեռներում ներկայումս հանդիպող վայրի ոչխարն ու այծը ընտանի տեսակների նախահայրերն են: Հնագիտական պեղումների տվյալները հաստատում են, որ հին Հայաստանում բուծվել են նրա տարածքում այժմ հայտնի գյուղատնտեսական կենդանիների բոլոր տեսակները:

Ներկայումս Հայաստանի անասնաբուծությունը իրենից ներկայացնում է զարգացած ենթաճյուղեր ունեցող մի ոլորտ, որտեղ անասնաբուծության վարման ավանդական տեխնոլոգիաներին զուգահեռ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչը հնարավորություն է ընձեռում տեղի բնակչիմայական պայմաններին առավելագույնս համապատասխանեցնել գյուղատնտեսական կենդանիների այս կամ այն տեսակի բազմացումը և մթերատվության ստացումը:

Ժամանակակից անասնապահությունն ընդգրկում է տավարաբուծությունը, ոչխարաբուծությունը, այծաբուծությունը, թռչնաբուծությունը, ուղտաբուծությունը, եղջերվաբուծությունը, ճագարաբուծությունը, մեղվաբուծությունը և շերամապահությունը:



Տավարաբուծություն

Տավարաբուծությունը հանդիսանում է ՀՀ անասնաբուծության ոլորտի առաջատար ճյուղը: Հանրապետությունում արտադրված կաթի 95%-ը և մսի գրեթե 58%-ը ստացվում է տավարաբուծությունից: Բուծվող տավարի 93%-ը տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարված, կաթնամսային ուղղություն ունեցող կովկասյան գորշ ցեղն է: Հանրապետությունում տավարաբուծությամբ զբաղվում են շուրջ 170 հազար գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Ներկայումս հանրապետության տավարաբուծության ոլորտում նկատվում են ինտենսիվացման և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման միտումներ:



Ոչխարաբուծություն

Ոչխարաբուծությունը ՀՀ-ի անասնաբուծության ավանդական ճյուղերից է, առավել զարգացած է հանրապետության նախալեռնային և լեռնային գոտիներում: Հազարամյակների ընթացքում ժողովրդական սելեկցիայի արդյունքում այստեղ հաջողությամբ բուծվում են տեղի բնակլիմայական պայմաններին գերազանց հարմարված մի քանի էնդեմիկ ցեղեր, որոնցից են մազեխ, բոգախ, դարաբաղի և բալբաս ցեղերը: Բացի այդ, հայ սելեկցիոներների կողմից ընտրասերման արդյունքում մեր հանրապետությունում ստեղծվել է նաև ոչխարի՝ հայկական կիսակոպտաբուրդ ցեղը: Վերջինս ունի սպիտակ կիսակոպիտ բուրդ, որը գերազանց հումք է հանդիսանում գորգագործության համար: Վերջին տարիներին ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հանրապետությունում նկատվում է ոչխարների և այծերի գլխաքանակի աճ, և ներկայումս այն կազմում է 746 հազար գլուխ: Տեղական ցեղերից զատ ներկրվել են նաև ոչխարի այլ ցեղեր, մասնավորապես՝ մուշտակատու ուղղության, բազմապտուղ՝ ռոմանովյան ցեղի, ինչպես նաև դրմակավոր՝ Էդիբակյան ցեղի ոչխարներ, որոնք հաջողությամբ



հարմարվել են տեղի բնակլիմայական պայմաններին: Մեր հանրապետությունում տարեկան արտադրվում է շուրջ 19 հազար տոննա ոչխարի միս: Հանրապետությունից տարեկան կարելի է արտահանել 180-200 հազար գլուխ ոչխար:

Խոզաբուծություն

Խոզաբուծությունը հանդիսանում է հանրապետության անասնաբուծության ոլորտի կարևոր ճյուղերից մեկը: Խոզաբուծությունը առավել զարգացած է Արմավիրի և Արարատի մարզերում, որտեղ էլ կենտրոնացած է խոզերի ամենաշատ գլխաքանակը: Հայ գիտնականների ջանքերով ստեղծվել է խոզերի հայրենական՝ հայկական մսային ցեղը, որը հիմնականում բուծվում է տնամերձ օժանդակ տնտեսություններում: Հանրապետությունում տարեկան արտադրվում է 17-18 հազար

տոննա խոզի միս (կենդանի զանգվածով):

Թռչնաբուծություն

Թռչնաբուծությունը ՀՀ-ի անասնաբուծության ոլորտի առավել մեքենայացված և ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ճյուղն է: Հանրապետությունում ներկայումս գործում են մեկ տասնյակից ավելի միջին և խոշոր թռչնաբուծարաններ, որոնք զբաղվում են թռչնամսի և ձվի արտադրությամբ: Հայ գիտնականների սելեկցիայի արդյունքում ստեղծվել է հավերի՝ երևանյան ցեղը, որն ունի սև և կարմիր տիպեր: Այս ցեղը շատ լավ հարմարված է մեր բնակլիմայական պայմաններին և հիմնականում բուծվում է տնամերձ օժանդակ տնտեսություններում: Հանրապետությունում տարեկան արտադրվում է 650-700 մլն ձու և 7-8 հազար տոննա թռչնամիս:



Անտառային տնտեսություն

Հայաստանում անտառները և անտառային հողերը կազմում են հանրապետության տարածքի շուրջ 11%-ը՝ 459.9 հազ. հա, որից 334.1



հազ.հա անտառածածկ տարածքներ են, այդ թվում 283.6 հազ. հա բնական անտառներ են, իսկ 51.5 հազ. հեկտարը՝ արհեստական:

Անտառային այգեգործությունը համարվում է աշխարհի նախապատմական ժամանակներից ամենահին գոյահամակարգը: Նրանք գտնվում էին խիտ անտառներով ծածկված գետափերի երկայնքներում և մուստոնային խոնավ նախալեռնային շրջաններում: Ընտանիքների անմիջական միջավայրի բարելավման աստճանական ընթացքում առանձնացել են օգտակար ծառերի և որթատունկների տեսակները, պահպանվել և բարելավվել, մինչդեռ անցանկալի տեսակները վերացվել են: Վերջի վերջո, ընտրվել են ամենալավ օտարերկրյա տեսակները և ներառվել ընտանեկան այգի-

ներում: ՀՀ-ում անտառներն, անկախ սեփականության ձևից, ըստ իրենց հիմնական նպատակային նշանակության դասակարգվում են՝ պաշտպանական, հատուկ և արտադրական նշանակության:

Այժմ են ընկնում բնական ռեսուրսների հարստությամբ և կենսաբազմազանության առատությամբ: Այստեղ հանդիպում են 274 տեսակի արորիզեն ծառեր ու թփեր, որոնցից էնդեմ ծառերն ու թփերը կազմում են 25 տեսակ, իսկ ռելիկտային տեսակները՝ 31: Անտառկազմող հիմնական տեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին, սոճին: Այս չորս տեսակները զբաղեցնում են հանրապետության անտառածածկ տարածության 89.1%-ը և անտառների պաշարների 97.2 %-ը:

Բուսաբուծություն

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ընդլայնելու համար իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղված են հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանը և հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության

մակարդակի բարձրացմանը: Ջերմատներում աճեցվում են լոլիկ, վարունգ, պղպեղ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, ելակ, տարբեր կանաչիներ (տերևաբանջարներ): Սովորական տեխնոլոգիաներով շահագործվող ջերմատներում 1 քմ բերքատվությունը տատանվում է 8-20կգ-ի սահմաններում, իսկ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառող ջերմատներում՝ 40-50կգ:

Զկնաբուծություն

ՀՀ-ի բնակլիմայական պայմանները բավականին նպաստավոր են արդյունագործական ձկնաբուծության և հատկապես սաղմոնաձկների և թառափագգիների բուծման ու աճեցման համար, իսկ ստորերկրյա ջրերի նպատակային օգտագործման արդյունքում տարվա բոլոր եղանակներին հնարավոր է կազմակերպել ապրանքային ձկան արտադրություն: ՀՀ-ում ձկնաբուծության զարգացման վերջին տարիների միտումները վկայում են, որ տնտեսավարող սուբյեկտների սովորական մասն ունի ձկնաբուծության վարման հարուստ փորձ և արդյունավետ կառավարման հմտություններ, ինչն այդ ոլորտը դարձնում է ինչպես շահութաբեր, այնպես էլ՝ հեռանկարային:

Ներկայումս մեզ մոտ տարեկան արտադրվում է շուրջ 14,0-15,0 հազար տոննա ապրանքային ձուկ, որի գերակշիռ մասը կազմում է ծիածանափայլ իշխանը: Բարձր որակական հատկանիշների շնորհիվ արտադրվող ձուկը մեծ պահանջարկ ունի ՌԴ-ում և այլ երկրներում, ինչի արդյունքում արտադրված ձկնամթերքի շուրջ 20-30%-ն արտահանվում է: Արդյունագործական նպատակով մեր հանրապետությունում աճեցվող հիմնական ձկնատեսակներն են կարպը, սպիտակ և խայտաբղետ պնդաձկատները, սպիտակ և սև ամուրը, Սևանի ամառային իշխանը, գեղարքունին, ծիածանափայլ իշխանը, կարմրախայտը և թառափագգիները: Ներկայումս հանրապետությունում գրանցված են շուրջ 220 ձկնաբուծական տնտեսություններ, որոնցից շուրջ 75%-ը գործում են միայն Արմավիրի և Արարատի մարզերում:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Տարբեր գյուղատնտեսական համակարգերը բնութագրելու համար օգտագործվում են տարբեր չափորոշիչներ՝ արտադրանքի քանակ և որակ, ինքնարժեք, արտադրության կայունություն: Ժամանակակից գյուղատնտեսության մեջ կիրառվում են հետևյալ համակարգերը.



ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Ոռոգում: Այն կոչված է օգնելու մշակաբույսերի մշակմանը, լանդշաֆտների պահպանմանը և ամայացած կանաչ ծածկույթի վերակենդանացմանը: Նպաստում է հողում բույսերի աճմանն ու զարգացմանն անհրաժեշտ ջրային, օդային, ջերմային և սննդային ռեժիմների ստեղծմանը: Ոռոգման ջրի արդյունավետ և ռացիոնալ օգտագործումը կարևորվում է գյուղատնտեսական մշակաբույսերի ջրասպառման և ոռոգման ռեժիմներն ըստ հանրապետության գոտիականության, ռելիեֆային ու կլիմայական պայմանների: Ոռոգելի հողատարածքների 12%-ի դեպքում ոռոգման ընթացքում օգտագործվում են ստորերկրյա ջրեր: Ոռոգելի հողատարածքների ավելի քան 90%-ը ոռոգվում է մակերեսային ջրերով՝ ջրամբարներից և գետերից ջրառման կամ պոմպերով



մղման միջոցով: Այդ մակերեսային ոռոգումը կարելի է բաժանել չորս կատեգորիաների.

- ✚ ակոսային ոռոգում
- ✚ շերտային ոռոգում
- ✚ հեղեղում, հիդրանտների և ճկուն խողովակների համակարգեր
- ✚ ոռոգման ջրի հուսալի մատակարարում (այն կնպաստի գյուղատնտեսական արտադրության ծավալների աճին և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը):




Ջրօգտագործում: Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հին ուղղությունը էքստենսիվն է (տարածված), երբ հողագործության արտադրանքի ծավալն աճում է ցանքատարածքների ավելացման՝ ընդարձակման, իսկ անասնապահության արտադրանքի ծավալը՝ կենդանիների գլխաքանակի ավելացման շնորհիվ: Որպես հողագործության համախառն բերքի և անասնապահության արտադրանքի ավել-

լացման մեծ հնարավորությամբ օժտված ուղղություն՝ կարող է ծառայել գյուղատնտեսության ինտենսիվ (արդյունավետ) զարգացումը: Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը ենթադրում է մշակվող հողի միավոր տարածքից՝ մեկ հեկտարից ստացվող բերքի՝ բերքատվության, ինչպես նաև գյուղատնտեսական մեկ գլուխ կենդանուց ստացվող մթերքի՝ մթերատվության ավելացում:

Հողօգտագործում: Գյուղատնտեսությունում հողը հիմնական արտադրողական ուժն է, այն ամբողջությամբ հենվում է հողի բնական բերրիության, մշակաբույսերի ու ընտանի կենդանիների աճի ու զարգացման, այսինքն՝ բնական երևույթների վրա և ուղղակիորեն կախված է դրանից: Հողն ունի ոչ թե կետային տեղաբաշխում, ինչպես բնակավայրերը, հանքավայրերը և անդյունաբերական ձեռնարկությունները, այլ տարածքային համատարած տեղաբաշխում: Հողերի ամբողջությունն անվանում են հողային ֆոնդ, որի կազմում առանձնացվում են գյուղատնտեսական արտադրությունում օգտագործելի՝ գյուղատնտեսական հողեր կամ հողահանդակներ՝ վարելահողեր, այգիներ, արոտավայրեր, խոտհարքներ և գյուղատնտեսական արտադրությունում չօգտագործվող հողատարածքներ՝ անտառներ, ճահիճներ, լերկ ժայռեր, սառցադաշտեր, կառուցապատված տարածքներ, ամայի անապատներ: Գյուղատնտեսական հողահանդակները կազմում են աշխարհի հողային ֆոնդի 1/3-ը: Արհեստական ոռոգումը ամենատարածված հողաբարելավման միջոցառումն է:



Հողերի բարելավում: Բերրիության բարձրացման համար կատարվում են հողերի բարելավմանը (մելիորացիա) նպաստակառուղոված բազմաբնույթ աշխատանքներ.



Կաթնարտադրություն: Կաթի արտադրության գործընթացը մի ողջ համակարգ է, սկսած կաթնատվության շրջանից մինչև փաթեթավորված արտադրանքի տեղափոխման համար անհրաժեշտ ջերմաստիճանի կարգավորումը՝ կաթնարտադրության վայրից մինչև վաճառակետ: Հայաստանում ձևավորվել է կաթի և կաթնամթերքի լուրջ մրցակցային շուկա, և հնարավորություն կա, որ կաթնամթերք արտադրող ֆերմերները երկրի ներսում իրական տնտեսական առաջատար դառնան: Ի տարբերություն կաթի արտադրության հետ-արտադրական շրջանի, որը Հայաստանում համեմատաբար կայուն է և արդյունավետ, մինչ-արտադրական շրջանը պահանջում է ավելի խորը զարգացում: Խնդիրը ոչ միայն ազնվացեղ կովերի կարիքն է, այլ նաև մեխանիկականի փոխարեն կաթնարտադրության մեջ ձեռքով աշխատելու ավանդույթը, որը կանխարգելում է երկրի ազգային և միջազգային շուկայում կաթնարտադրության առաջընթացն ու մրցունակությունը:



Կաթ արտադրող միջին ֆերմերային տնտեսությունը բաղկացած է վեց հոգուց, ունի 3-10 կով, որոնցից յուրաքանչյուրը արտադրում է տարեկան միջինը 1500-2000 լիտր կաթ: Ներկայումս կաթի արտադրության միջին հաշվարկը ցույց է տալիս, որ ֆերմերային տնտեսության գոյությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է 35 կով: Սա կբարձրացնի նրանց տարեկան մաքուր եկամուտը:

ԻՆՉՊԵՍ ՕԳՆԵԼ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ



Գյուղատնտեսության մեջ հենց գյուղական բնակչությունն է տարեցտարի իրենց աշխատանքով վաստակում օրվա հացը՝ երկիրն ապահովելով թարմ, օգտակար ու սննդարար մթերքներով և իր գոյության համար ինչ-որ չափով հույսը դնում է փոքր ու բաժանված հողամասերի, համայնքային կամ պետական արտավայրերի վրա: Այդ

փոքր հողակտորների տերերը շատ սահմանափակ ռեսուրսներ ունեն, աճի ներուժն էլ փոքր է: Այդ հողակտորներից ստացված արտադրանքը հաճախ բավականացնում է միայն գոյությունը պահպանելուն: Ավելցուկ արտադրանքի վաճառքը դժվարանում է կազմակերպված շուկաների հետ ունեցած սահմանափակ կապերի և վերամշակման, պահեստավորման, կառավարման, փաթեթավորման կամ բաշխման հասանելիության կամ բացակայության պատճառով: Գյուղատնտեսության և գյուղական շրջանների ընդհանուր գնահատումը վճռորոշ կլինի գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման հատվածի պատշաճ ռազմավարություն մշակելու համար: Այդ կարգի ուսումնասիրություններն իրենց նպաստը կբերեն ոլորտում տիրող վիճակի գնահատման հարցում, առաջնահերթ ուշադրություն կդարձնեն և կնախանշեն ենթաոլորտները, միջամտության բնագավառները և շահառուներին՝ խորհրդակցելով տեղի պետական ու մասնավոր շահագրգիռ կողմերի հետ: Մշակելով և իրագործելով գյուղացիների եկամուտի ավելացման ծրագրեր՝ նպատակը մեկն է՝ նպաստել աղքատության նվազմանը Հայաստանի գյուղական վայրերում:



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Վերապատրաստման ծրագրերը պետք է մեծ ազդեցություն ունենան համայնքային տնտեսությունների եկամուտների և սպառման վրա, համայնքային տնտեսությունները վերապատրաստման արդյունքում պետք է որդեգրեն գյուղատնտեսական նոր մեթոդներ կամ աճեցնեն նոր տեսակի մշակաբույսեր: Քանի որ հայ ֆերմերներն ընդհանուր առմամբ ունեն պահպանողական մտածողություն և թերահավատ են, որ նոր մշակաբույսերը կլինեն շահութաբեր, ուստի ավելի շատ հակված են հաջորդ տարվա

համար աճեցնել մշակաբույսերի նույն փաթեթը, քան նախընտրել այնպիսի բարձրարժեք մշակաբույսեր, որոնք պահանջում են ֆինանսական մեծ ներդրումներ: Վերապատրաստման նպատակը գյուղական աղքատության կրճատումն է՝ Հայաստանի համար կարևորագույն նշանակություն ունեցող ոռոգման ենթակառուցվածքների վերականգնման, ոռոգման համակարգի կառավարման, ինչպես նաև ֆերմերներին, վերամշակողներին ֆինանսական աջակցություն ու խորհրդատվություն տրամադրելը, ֆերմերներին սովորեցնելը մշակության արդյունավետության բարձրացման, ցանքի ինտենսիվության, մշակության ճիշտ եղանակների և պաշտպանության ձևերը՝ ինչպես կազմակերպել իրենց դաշտի, այգու և տնամերձ հողակտորի ոռոգումը՝ կիրառելով ոռոգման նոր տեխնոլոգիաներ և հմտություններ, որոնք բարձրացնում են ոռոգման արդյունավետությունը, ավելացնում են ջրի և աշխատուժի խնայողությունը և բարքատվությունը:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման նպատակով մի շարք ծրագրեր են իրականացվում հանրապետության տնտեսության, հողի և գյուղատնտեսական արտադրության միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների համար: Հաշվի առնելով ագրարային ոլորտի առանձնա-

հատկությունները, ագրարային հատվածում ստեղծված խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը՝ երկրի պարենային անվտանգության և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը կարևորվում է պետական ակտիվ աջակցությամբ: Այն առավելապես ուղղված է ագրարային ոլորտում իրավական հիմքի ձևավորմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության և ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության ենթակառուցվածքների զարգացմանը, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, սննդամթերքի անվտանգության և մասնագիտական խորհրդատվության համակարգերի զարգացմանը և այլն:



ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ



Երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը ՀՀ-ի ագրովերամշակող արդյունաբերությունն է, որը շատ է կարևորվում նաև գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման առումով: Այն բավականին բազմազան է, ընդգրկում է սննդարդյունաբերության գրեթե բոլոր ոլորտները, դրանցից առավել մեծ ծավալներ են կազմում խաղողի, պտուղ-

բանջարեղենի, կաթի և ծխախոտի վերամշակման ճյուղերը:

Ներկայումս հանրապետության գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում գործող բոլոր ձեռնարկություններն իրենց առջև խնդիր են դրել բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թողարկվող արտադրանքի մրցունակությունը:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

ՄԱՐՔԵԹԻՆԳ



Գյուղատնտեսական ապրանքների մարքեթինգը մի ամբողջական գործունեություն է, որը կապված է գյուղատնտեսական արտադրության, սերմերի, բերքահավաքի, վերամշակման և ապրանքը վերջնական սպառողին հասցնելու հետ: Այն պետք է ներառի սպառողների, կարիքների, վարքի, գնումների և խթանման վերլուծությունը, ինչպես նաև մարքեթինգային գործողությունները՝ առաջին գնորդից մինչև վերջին սպառողը: Գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը

բնորոշվում է արտադրության հիմնական միջոցով՝ հողով, դրա որակով և շահագործման ինտենսիվությամբ: Գյուղատնտեսությանը հատուկ բնակլիմայական և տնտեսական գործընթացների ինտեգրման արդյունքում ստեղծվում են նոր պայմաններ՝ արտադրության, հետևաբար նաև մարքեթինգային գործունեության կազմակերպման համար:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ

ԻՐԱՑՈՒՄՆ ՈՒ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ

Ընդհանրապես գյուղատնտեսությունը ֆինանսական ներդրումների տեսանկյունից համարվում է բարձր ռիսկային ոլորտ, ինչը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով՝ դրա անմիջական կախվածությունից: ՀՀ



գյուղատնտեսության ոլորտն առավել ևս աչքի է ընկնում ֆինանսական ներդրումների սակավությամբ, քանի որ առկա է նաև ցածր եկամտաբերության գործոնը: Գաղտնիք չէ, որ ոլորտի ռիսկայնությունից ելնելով՝ վարկերը տրամադրվում են բարձր տոկոսադրույթներով: Գյուղատնտեսության ոլորտի ապագան ուղղակիորեն կախված է գյուղատնտեսական մթերքների իրացումից ու դրա հետագա

զարգացումից: Չունենալով մթերքների իրացման կայուն շղթա՝ հնարավոր չէ ակնկալել գյուղատնտեսության զարգացում: Նպատակը ոչ միայն ցանքատարածություններն ավելացնելն է, այլև գյուղացիներին ապահովելն է որակյալ սերմով, որը կբարձրացնի բերքատվությունը, կավելացնի այս ոլորտի շահութաբերությունը և ցանքատարածությունների ավելացումները:



Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ



Հանրապետության տնտեսությունում գյուղատնտեսությունը գերակայող ճյուղ է, որի հիմքն է հանդիսանում գյուղացիական-ֆերմերային տնտեսությունը, վերջիններիս էլ ներկայումս բաժին է ընկնում արտադրվող արտադրանքի բացարձակ գերակշիռ մասը: Հայաստանում տարվող տնտեսական քաղաքականությունը, սեփականության իրավունքի ամրապնդման իրավական հիմքերն

ազատ տնտեսավարման հնարավորություններ են ստեղծում ինչպես ձեռներեցության, այնպես էլ ագրագործարարության բարենպաստ միջավայրի ու մրցակցության ձևավորմանը:

Մեր երկրում գյուղատնտեսությունը զարգացման լուրջ ներուժ ունի, գյուղացին պետք է շահագրգռված լինի ավելացնելու արտադրության ծավալները, գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսությունում տնտեսավարողներին աջակցություն ցուցաբերելը բուսաբուծության, անասնապահության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառում՝ մատչելի պայմաններով նպատակային վարկերի ծավալների ընդլայնման և ներդրումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոցով: Իրացման խնդրին անդրադառնալով՝ հարկ է նշել, որ պայմանագրային փոխհարաբերությունները խորացնելու և գյուղատնտեսական ապրանքների մթերման գործընթացն առավել կազմակերպված, առանց խոչընդոտների անցկացնելու և գյուղացիական տնտեսությունների (ֆերմերների) ու պտուղ-բանջարեղեն, խաղող և կաթ մթերող գործարանների միջև պայմանագրային փոխհարաբերությունների հաստատումը խթանելու նպատակով պետք է ստեղծվի գյուղատնտեսական մթերքների իրացման շղթայի ապահովում: Խնդիրը հենց իրացման այս շղթան է, որովհետև մեր երկրում խոշոր ագարակատերերը սակավաթիվ են, ու հիմնական

գյուղատնտեսությունը հենց փոքրներն են ստեղծում՝ թեկուզ հենց գյուղական բնակավայրերում զբաղվածության առումով: Այս ամենի շղթայական լուծումից հետո է, որ կկարողանանք ներկրվող պարենամթերքները տեղական արտադրությամբ փոխարինել: Այլ կերպ՝ սա նշանակում է, որ առանց գյուղատնտեսության արտադրանքի իրացման ներքին խնդիրները լուծելու, ըստ այդմ՝ նպաստելու արտադրության ծավալների աճին ու մրցունակության բարձրացմանը, չենք կարող խոսել գյուղատնտեսական ապրանքների մթերման, իրացման և արտահանման ծավալներն ավելացնելու մասին:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ֆերմաները տեղաբախշելիս և ֆերմերներին վերապատրաստելիս հարկավոր է հաշվի առնել էկոհամակարգերի պաշտպանության և պահպանության, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև այդ տարածքի սոցիալական և տնտեսական ասպեկտներին առնչվող հարցերը: Կայուն գյուղատնտեսությունը գյուղական շրջանների համար լավագույն տարբերակ է՝ լուծելու համար իրենց տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրները:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):